ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ։

Թիֆլիզ Օլգինսկայա փող. տ. № 31—33 (Զինուորական նահանգական դատարանի և Օլգինսկի լնատիտուտի հանդէպ), բաց են ամեն օր (բացի կիրակի և տօն օրերից), առ. 10 ժ. մինչև 12½-ը կէս ժամից յետոյ։ Անձնական տնօրէնութիւնից խմբագրի հետ՝ **երեքշաբթի և ուրբաթ** առ. 11—12 ժ.

Տելեֆոն № 282։



ԾԱՆՕՒԹԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ընդունւում են ամեն լեզուով տարբ մէկ-երորդական **Տարազի**, վերջին եր-ես 25 կ. մանրատառ (պետիտ)։ Կրկնուղ յայտարարութիւններն առանձին համաձայնութեամբ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ՝տարին 6 ր.(արտա-սահման 10 ր.) առանձին №-ը 20 կ.

ՀՍՍՏԻՆ՝ ԹԻՓԼԻՍԸ,ред. «ТАРАЗЪ»

Rédaction du journal TARAZ. Tiflis (Caucase).

Գեղարուեստական, գրական, գիտական, քլիւնտրատական

պատկերազարդ շաբաթաթերթ. լոյս է տեղում շաբաթը մի անգամ կիրակի օրերը։

№ 39 կիրակի հոկտեմբերի 20 | **տասնեւերեքերորդ տարի 1902**

Մ Ա Ն Ր Ա Հ Ա Ն Գ

VI

Դ Ր Ա Զ

(Կատիլ Մանդէսից)

Օրը հրաշալի էր, երբ ես ու իմ ընկերուհին դուրս գնացինք քաղաքից՝ զբօսնելու։ Լռիկ գնում էի նրա հետ անտառի միջով՝ զարմացած թռչնակներին ներշնչելով անուշաբոյր օդը, ականջ դնելով թռչնակների դայլայլին և զմայլելով ծառերի թարմ գալարով։ Յանկարծ ընկերուհիս ընդհատում է լռութիւնը.

—Դրազ կըբռնեմ, ասաց նա,—որ այս րոպէին դու իմ մասին ես մտածում։

—Սխալւում ես, ընկերս, հաւատացնում եմ քեզ։

—Հապա ինչի մասին էիր մտածում այս րոպէին։

—Մտածում էի այն վարդի մասին, որ բացւել է տհա այն վայրի վարդենու վրայ։

—Տեսնում ես, որ ես դրազը տարայ. դու հօ չես մերժիլ, որ ես իսկ և իսկ վարդի եմ նման, իսկ իմ քմահաճոյքները՝ մասրենու փշերի։

Ես համաձայնւեցի։ Մի րոպէից յետոյ նա նորից ասաց.

—Դրազ կըբռնեմ, իմ թանգակին, որ դու հիմա էլ ես իմ մասին մտածում։

—Հաւատացնում եմ քեզ, ազնիւեակս, որ սխալւում ես. հիմա կրտաբուեա, մի վիճիր։

—Ասա, ուրեմն, ինչի մասին ես մտածում հիմա։

—Տհա այն թռչնակի մասին, որ ճաւոդում է յասմիկի և վարդենու ոստերի մէջ։

—Տես, որ հիմա էլ տարայ։ Մինչ ես ևս չեմ ճաւոդում, ինչպէս այն թռչնակը, մինչ ես ևս այնպէս շարժուն և նազելի չեմ...

Կրկին ես սիտի համաձայնւէի։

Մի րոպէից յետոյ նա նորից [illegible] ասաց.

—Խնդրում եմ քեզ, երբոր և վերջին անգամը պրազ դանք, որ այս րոպէին էլ դու իմ մասին ես մտածում։

—Համաձայն եմ։ Ես մտածում եմ ծիծեռնակի մասին, որ շաբունակ նստում է միևնոյն բնի մէջ և սիրում է յարատև ու անփոփոխ սիրով։

Նա ծիծաղեց.

—Թերևս ա՛ս անգամ ես տարւեմ...

Մոպասան

Բ Ո Ղ Ո Ք

—

Ինչո՛ւ անսիրտ զարթուխին
Պէտք է կեղծել այլոց առջեւ,
Երբ տիրած է խոր տխրութիւն
Հոգւոյն վրայ մեր հոլաթեւ։

Ինչո՛ւ ժպիտ մի խաբուսիկ
Շրթանց վրայ միշտ թրթռայ,
Երբ զգայո՛ւն, մեղասաղծիկ
Տանջւած հոգին յա՛ր կըվիայ։

Ո՛րքան դառն է կեղծ խնդութիւն,
Երբ վիրաւոր սրտէն քղխի.
Քանի՜ տխուր հակասութիւն
Կեանքի ընթէն կըպատանջի...

Or. Չ. Սլիաճամ

ԱՉԽԱՐՀԻԿ ՏԻԿԻՆ

Վէպ Հեկտոր Մալոյի, նկարները Էմիլ Բայարդի

ԵՐԲՈՐԴ ՄԱՍ

III

Ժօֆրուայի խօսքերը, որոնց մէջ չատ բան կար չասած, և անշուշտ, նպատակով թաքցրած, այնու ամենայնիւ միջոց տուին Լօտիէին մեկնել այն, ինչ որ մինչև այժմ նրան գաղտնիք էր թւում։ Նա գիտէր հիմա, որ մատոյ հասակում հօր բռնութեան տակ Ժօֆրուան չէր կարողացել ազատական նէիրել իրան գեղարուեստի և այդ ի հարկէ արդելք եղաւ նրան կազմակերպել իր համար այնպիսի ապագայ, որպիսին նա երազում էր ունենալ։ Նէ ահա, մտածում էր Լօտիէն, ճնշած վշտից, իր յոյսերը չիրագործելու պատճառով, նա երևի մտածում է, թէ լաւ կըլինէը չոգևորել բարձր ձգտումներով, և այդ պատճառով հաւանական է, ասաց՝ «ես պէտք է հասկանայի, որ երջանկութիւնը պարզութեան մէջ է»։

Շատ անգամ աշխատելու ժամանակ Ժօֆրուան նկատում էր Լօտիէի հայեացքը իր վրայ ուղղած ամենաքնքուշ կարեկցութիւնով, բայց երբէք նրա հայեացքը այնքան խորը ղգացմունք չէր արտայայտում, որքան նրանց վերջին զրօսանքից յետոյ։

—Նա բախտաւոր է երևկան զրօսանքով, մտածում էր Ժօֆրուան, չաչխատելով մի այլ բացատրութիւն որոնել Լօտէի ղգացմունքի մէջ։

Այդ ցանկութիւնն էր ալքնացնում նրա մէջ՝ տալ նրան այդ վարձութիւնը ամեն անգամ, երբ այդ հնարաւոր լինի։ Ժօֆրուայի իրան համար էլ երեկան զրօսանքը չատ դուրեկան էր։

Սովորաբար աշխատութեան ժամանակ ոչ մի նիւթի վրայ խօսք չէր լինում, բացի ապիկիի և նկարչութեան մասին, բայց այս անգամին խօսակցութիւնը աւելի մտերմական ուղղութիւն ստացաւ, նա հարցաղնդում էր նրան՝ նրա հրեխայութեան, նրա կրթութեան մասին, հարցնում էր, թէ Լօտիէն ինչ է կարդացել և մինչև երեկոյ ժամանակը նրա համար աննկատելի անցաւ։

Նա ցանկանում էր Լօտէի հետ դնալ մի տեղ ճաշելու միասին և երեկոն անցկացնել երեկան նման, բայց կշռեց որ դա կընդունէը պարտաւորականութեան ձև և հետևեալ օրերի համար, իսկ որովհետև նա չէր ուզում իրան ոչնչով կապել, ուստի նա գնաց միայնակ ճաշելու իր պանդոկը։

Ճաշելուց յետոյ նա իսկոյն դուրս եկաւ, մտադրուած լինելով առաջարկել Լօտիէին գնալ իր հետ զրօսնելու. նա գիտէր, որ դա իրան կր զբաղեցնէ, զրօսանքը չէր կարող նրա վրայ, ինչպէս ճաշը, ճնշող պարտականութիւն դնել։ Մանելով ցանկապատի մէջ, նա տեսաւ Լօտիէին, որ նստած էր իր էրճիթի դուռնր, բայց միայնակ չէր։ Նրա մօտ կանգնած էր մի միջակ հասակի մարդ, ըստ երևոյթին նա երիտասարդ էր, ճկուն չարժմունքներով, ուսերի վրայ փռուած սև մազերով, սևագոյն թաւիչէ բաճկոնով և որը ոգևորուած չարժմունքներ էր ցոյց տալիս։ Ինչու համար այստեղ է այս մարդը։ Երբ նա երեսը դարձրեց, Ժօֆրուային թուաց, թէ դա ալէքսրագործն է, որին իրան պատահել էր տեսնել։ Ուրիմն Լօտիէն ճանաչում է նրան։ Ինչու ուրիմն նրա մասին ոչինչ չէ ասել իրան։

Ժօֆրուան իսկոյն ճանապարհից չեղաւ և կանանչի վրայով ուղղեց քայլերը դէպի արեւատնոց։ Հարկադրւած հրաժարուել զբօսնելուց. նա բարկացած էր Լօտիէի վրայ, նրան պատճառ համարելով այդ անյաջողութեան մէջ։

Բայց զարմանալի է միթէ, որ Լօտիէն ոչինչ չէր ասել իրան, թէ ծանօթ է այդ փականագործին, որ թւում էր նրա հետ մօտ ծանօթ է, դատելով՝ նրա ազատ չարժմունքներով։ Երբ աշխարհիկ մարդը խօսակցում է կնոջ հետ, հեռւից դժւար է հասկանալ, թէ նրանք ինչի վրայ են խօսում՝ սիրոյ, թէ դատարկ բաների վրայ, բայց փականագործը, այդ այլ բան է. նա առանց ձեռքերը թափ տալու, առանց ոգևորուած չարժմունքների չէր խօսում. միթէ նա սիրոյ մասին էր խօսում։

Մինչև այժմ Ժօֆրուան Լօտիէին երևելայի տեղ էր դնում, բայց այն, ինչ նա տեսաւ այժմ, իր աչքերը բաց արին։

Ալեհատնոցը մանելուց յետոյ Ժօֆրուան վեր առաւ պատից իր նկարած Լօտիէի պատկերը և երկար ժամանակ նայում էր նրա վրայ, կարծես թէ նրա մէջ ուզում էր իրան նոր գարմացրած փաստի մեկնութիւնը գտնել։ Պատկերը հիանալի նման էր և Ժօֆրուային չատ դուրեկան։

Ի հարկէ, Լօտիէին կարելի է սիրել և անհնարին է չըսիրել, բայց փականագործի սիրոյ առարկան լինել, ահա ինչն էր բարկացնում նրան։

—Այդ անհեթեթութիւն է, այդ անհեթեթութիւն է, կրկնում էր նա։ Միթէ հնարաւոր է, որ այդքան գեղեցիկ, այդքան նազելի և վարկեակազմ մի աղջիկ պատկանէը մի բանւորի։

Բայց ճչմարիտ է և այն, որ սիրոյ մասին խօսում են միայն նրա հետ, ով ցանկանում է այդ լսել և եթէ նրանց խօսակցութիւնը այն բովանդակութիւնն ունէը, ինչ որ Ժօֆրուան էր կարծում, նշանակում է նա Լօտիէին դուրեկան էր, կամ գոնեա զուարճացնում էր նրան։

Այդ միաքը աւելի բարկացրեց Ժօֆրուային։ Վերջապէս նա վճռեց, թէ չիմարութիւն է դրա վրայ մտածել։ Ի՞նչ զարմանալի է, եթէ երիտասարդ մարդը չայտնում է իր սէրը նորատի աղջկան։ Եւ նա ինչ իրաւունք ունի խանգարել այդ գործի մէջ։ Միթէ Լօտիէն այս դէպքում մի մեղք է գործում իր առաջ։ Եթէ փականագործը դուր է գալիս Լօտիէին, այդ նրա գործն է և ոչ թէ իր, ըստ որում նա՝ Ժօֆրուան ոչ նրա հայրն է, ոչ եղբայրը, ոչ սիրահարը։ Փականագործը սիրում է նրան, նա սիրում է փականագործին, բրան ինչ։ Եւ նա իրաւի, կրկնում էր ինքը իրան.

—Իմ ինչ գործս է։

Նա անչնորհքութիւն էր համարում վարագոյրի հանելիս լուսամուտից դուրս նայել և բոլորովին բնական՝ բայ անել դուռը կատին կանչելու համար, այն ինչ գիտենք, որ կատուն էլ մուտքի համար իր ճանապարհն ունէր։

—Դիաւօլօ, Դիաւօլօ, կոչում էր նա։ Բայց Դիաւօլօն չէր երևում, իսկ Ժօֆրուան նոյն միջոցին նշմարեց վերջալոյսի մէջ, որ Լօտիէի պարտէզում ոչ ոք չըկայ, նրա դուռը փակ է և կարմրադոյն վարագոյրի քամակից հրաւի լոյս էր երևում։

Եթէ դա սիրոյ բացատրութիւն լինէր, միթէ նա այդպէս չուտ կը հեռանար։

Ուրիմն կարելի է, որ ինքը սխալւում է և հաւանական է, որ սխալւում է։

Այդ միաքը խաղաղացրեց նրա զրգռմունքը և նա ամբողջ երեկոն մատիտը ձեռքին հանդիստ և բաւականին ուշադրութիւնով զբաղւած էր պանազան նկարներով։

IV.

Բայց Ժօֆրուան ուրախ տրամադրութեան տակ չը զգիթեց քնից, և երբ Լօտիէն ներս մտաւ, դուռը բացուելուն պէս, Ժօֆրուան չընդունեց նրան ժպիտով, ինչպէս երեկուան օրը:

Որովհետև Լօտիէն կանգնած էր նրա առաջը ամօթխած երեսով, նա հարցրեց, թէ ուզում է արդեօք աշխատել:

—Այո, ի հարկէ, պատասխանեց Լօտիէն:

—Այդ դէպքում, լանդլեմ վաւարանը վառէք:

—Ձեք ցանկանում, որ ձեզ համար ւեզ ու հաց պատրաստեմ:

—Ես չեմ ուզում ուտել:

Այդ այնպէս չոր ձայնով և այն ձեւով էր ասուած, որ Լօտիէն նրանից երբեք չէր լսել:

Լօտիէն հասկացել էր, որ Ժօֆրուան անբաւական է նրանից, տեսնելով նրան փականագործի հետ խօսելիս և ուզում էր գալուն պէս, բացատրել նրան, թէ դա ինչ բան է: Բայց Ժօֆրուայի ընդունելութիւնը չփոթեցրեց նրան և նա երկար ժամանակ ոչինչ չէր կարողանում ասել:

Վերջապէս Լօտիէն վճռեց խօսել: Ժօֆրուան պատրաստւում էր տախտակը թրծել և Լօտիէն, ըստ սովորականին, մօտեցաւ նրան օգնելու համար:

—Երբ տաղտկալի ժամանակ անցկացրի ես երեկոյեան, ասաց նա, օդուտ քաղելով, որ Ժօֆրուայի աչքերը իր վրայ չեն ուղղած:

—Ա՜, այդ ինչո՞ւ, հարցրեց նա, իսկոյն նրա երեսին նայելով:

—Որովհետև ես ոչ մի կերպ չէի կարող ազատուել պ. Պաւարի ձեռքից:

—Ո՞վ է այդ պ. Պաւարը:

—Նէքթարագործ է:

—Ա՜, այո՛, այդ փականագործը, պատասխանեց նա, հարց տալով իրան, թէ ինչու Լօտիէն նրան մեծարում է նէքթարագործ անուանով:

Բայց որպէսզի չը վախացնէ նրան և չարդելէ բացատրութիւն տալու, ինչպէս, ըստ երեւոյթին, Լօտիէն ցանկանում էր, նա մեղմ ձայնով ասաց.

—Ուրեմն դուք ճանաչո՞ւմ էք նրան:

—Նա յաճախ խօսակցում էր ինձ հետ, երբ ես աշխատում էի Տրիպի կնոջ հետ, որի մօտ նա գալիս էր երբեմն: Տրիպը նրան չատ է սիրում և զմայլում է նրանով, նա նրան չատ է գովում, համարում է ընդունակ, գործունեայ արհեստաւոր:

—Ուրեմն նա սովորականից բո՞ւրձր մարդ է, ասաց Ժօֆրուան, որին այդ դովեստները գլդռում էին:

—Այդ բոլորը Տրիպն է ասում, չարունակեց Լօտիէն, իսկ ես գիտեմ միայն, որ նա չատ տաղտկալի մարդ է:

—Ա՜, նա տաղտկալի է, կրկնեց նրա հանից Ժօֆրուան կուանալով դէպի վառարանը, ուր թրծւում էր նրա տախտակը:

—Այո՛, տաղտկալի է, բայց թէ նա չատ լաւ մարդ է, բարեսիրտ և մեծահոգի մինչ այն աստիճանի, որ իր վաստակածի մեծ մասը, իսկ նա չատ է վաստակում, տալիս է իր աղքատ ընկերներին:

—Եւ այդ ձեզ հրապուրո՞ւմ է:

—Այդ արգելում է ինձ նրան ասել, թէ նա ինձ տաղտկացնում է:

—Ինչո՞վ է նա ձեզ տաղտկացնում:

—Իր անվերջ խօսակցութիւնով:

—Ուրեմն նա ձեզ հետ երկար խօսակցութիւննե՞ր է անում, ասաց Ժօֆրուան, սեղմելով մի ուրիշ ունելիքով տախտակը, որ նա չուզէր: Եւ յանկարծ, հրամայական ձայնով ասաց.

—Սեղմեցէք վերեից:

Լօտիէն արագապէս վերւ առաւ ունելիքը և կատարեց նրա պահանջը:

—Ինչի՞ մասին է նա առնախօսում:

—Ամեն ինչի—քաղաքականութեան, ժողովուրդը վերակրթելու:

—Այդ ինչ առթիւ:

—Առանց առիթի, դուրս միայն նրա համար, որ վարժւի. նա ճառախօսում է ժողովների մէջ:

—Ուրեմն նա ուզում է պատկինել ձեզ իր մտքերը:

—Երևի. երբէք նա ոտպատրաստում էր ինձ, որ ամուսնութիւնը մի տեսակ վարձնութիւն է:

—Ա՜յ, դաղափար, ասաց Ժօֆրուան ծիծաղով: Այդ ինչպէս էր նա ձեզ մեկնում:

—Ինձ դժւար է ձեզ պատմել, պատասխանեց Լօտիէն, հանգստացած, որ Ժօֆրուան ծիծաղեց: Տրիպը ասում է, թէ պ. Պաւարը հեռուոր է, ուրեմն պերճախօսութիւնը ինձ անմատչելի է, ես նրա ոճից ոչինչ չեմ հասկանում:

—Բայց ինչպէս պատահեց, որ նա սկսեց ձեզ հետ այդպիսի խօսակցութիւններ:

—Այդ այն միջոցից սկսւեց, երբ ես լաւ երեկոները սկսեցի պարտէզում անցկացնել:

—Եւ այդ կրկնւում էր ամեն երեկոյ:

—Համարեա՛:

—Այդ ինչպէս է, որ ես նրան չէի տեսնում:

—Նա դնացել էր դատաը աշխատելու, միայն երբէք առաւօտ վերադարձաւ:

—Իրաւի՞ նա ձեզ տաղտկացնում է:

Եւ այս հարցը տալիս Ժօֆրուան չալուածակ նայում էր նրա աչքերին:

—Ինձ աւելի դուրեկան էր կարդալ կամ հերազել, բայց ինչպէս նրան հասկացնել այդ առանց վիրաւորելու: Ես միայն մի միջոց դիտեմ. վախչել և իմ պարտէզից ձեռք վեր առնել:

Արդեօք անկեղծ է նա խօսում, հարցնում էր Ժօֆրուան ինքն իրան: Բայց նա պատճառ չունէր նրան չընդառաջելու:

—Ուրիշ միջոց կայ նրանից ազատուելու, ասաց նա:

—Ի՞նչ միջոց:

—Ամեն երեկոյ գնալ ինձ հետ զբօսնելու, մինչև որ ես այստեղ աշխատում եմ:

—Ա՜խ, ինչ բաղդաւորութիւն է:

Բայց յետոյ, իսկոյն զսպելով ակամայ ցոյց տւած ուրախութիւնը, ասաց.

—Ես չեմ ուզում նրանից ազատուելու համար ձեզ ծանրութիւն պատճառել, ձեզ ինձանո՞վ տաղտկացնել:

—Դուք նկատեցի՞ք միթէ, որ ես երբէք տաղտկանում էի:

—Ոչ:

—Ուրեմն ինչո՞ւ պէտք է տաղտկանամ այսօր և վաղը: Ես, վաղուց է, ուզում էի բարձրանալ բլրի վրայ արևի մայր մտնելը տեսնելու համար. մենք այսօր մի փոքրը վաղ կըվերջացնենք մեր գործը և կըգնանք:

Երբ Տրիպը նախաճաշիկը բերեց և Լօտիէն գնաց իր խրճիթը, ծերունին դրեց նախաճաշիկը սեղանի վրայ, չզդուրս գնաց չտասրել ըստ սովորականին, այլ սկսեց ետ ու առաջ քայլել, սեղանից անցնում էր խոհանոցը, այնտե-



Լօտիէն հասկացել էր, որ ժօֆրուան անբաւական է իրանից։

ղից վերադառնում էր կրկին սեղանի մօտ, առանց որևէ կարեւորութեան և տալօրինակ չիոմիւռած էլ։

—Ի՞նչ էք ուզում, հարցրեց ժօֆրուան, նչմարելով, որ Տրիպը մի բանով անհանգստացած է։

—Թոյլ կրնաք արեւատնտեսի դուռը բաց անել, ասաց ծերունին, առանց պատասխանելու։

—Բաց արէք. բայց ասացէք այդ ինչու համար է։

—Որ ես տեսնեմ, երբ որ Լօտիէն ներս մտնի։

—Ասացէք ինչ կայ։

—Այդ հեչա բան չէ։

Տրիպի երեսը մեծ չիոմիւռիւն էր ցոյց տալիս։

—Ես ուզում եմ ձեր խորհուրդը հարցնել, ասաց նա վերջապէս։—Առաջինը այն պատճառով, որ դուք այնպիսի մարդ էք, որի խորհրդին կարելի է հետևել, յետոյ, որովհետև ամեն ինչ որ վերաբերի օր. Լօտիէնին, պէտք է առաջ ձեզ դիմել, քան. որում դուք նրա համար հայր էք... իրաւ է չատ երիտասարդ, պէհ, եղբայր, ասենք...

Նա ըստ երևոյթին դժուարանում էր գործը բաց անել։

—Եթէ դուք ինձ հաւատում էք, խրախուսում էր նրան ժօֆրուան, չըպէտք է քաշէք պարզ խօսելուց։

—Ես չեմ քաշւում, բայց չըդիտեմ ինչից սկսեմ։

—Խօսքը Լօտիէի մասին է, նրանից էլ սկսեցէք։

—Ձչմարիտ չէ, որ նա չատ սիրուն աղջիկ է։

—Ամենագեղեցիկ։

—Եւ-քարեսիրտ, հեզաբարոյ, կարգաւոր, միևնոյն ժամանակ աշխատասէր, հազւագիւտ աղջիկ է, չէ որ ճըշմարիտ է։

—Ճշմարիտ է։

—Եւ ամենքը այդպէս են կարծում, ով նրան ճանաչում է։ Նայելով նրա վրայ, անհնար է չասել՝ «ինչ սիրուն է». իսկ եթէ մարդ այն հասակի է, երբ ամուսնանում են, չէ կարող նոյնպէս չըմտածել, թէ «լաւ կըլինէր նրա հետ պատահել»։ Այդպէս է մտածում պ. Պաւարը... համարեա այդպէս։ Դուք գիտէք, մեր հարևան վաճառագործը. գեղեցկատես երիտասարդ է և լաւ բանուոր, մի մարդ, որ կոֆէները չէ քաչ դալիս և չատ է վաստակում, նրանք իրար արժեն։

—Նա խնդրեց ձեզ խնամախօսել։

—Խնամախօսելը դժւար չէր, բայց բանն այն է, որ դա սովորական խնամախօսութիւն չէ, ահա ինչու ինձ պէտք է ձեր խորհուրդը։ Երբ Պաւարը յայտնեց ինձ իր մտադրութիւնը, ես իսկոյն հրաժարւեցի և ասի, որ նա ինքը գնայ և առաջարկութիւն անէ։ Բայց, այդ փուչը ճալոպիկ է խօսում, վերջապէս խոստացայ. իսկ երբ նա հեռացաւ, ես պատմեցի կնոջս և նա խնդրեց ինձ՝ ոչինչ չըձեռնարկել, առանց ձեզ հետ խորհրդակցելու։

—Ասացէք, ես ձեզ լսում եմ։

—Պէտք է ձեզ ասել, որ Պաւարը իր կարծիքներն ունի և նա պէտք է նրանց հնազանդւի։ Այդ նրա դաղափարն է։ Ես դաղափարներ յարգում եմ, բայց չեմ կարծում, թէ նրանց համար պէտք է մեռնել. առաւօտները ես ցրում եմ հասարակապետական լրագիր, երեկոները միապետական։ Ու ահա, երբ նա սիրահարւել է օր. Լօտիէի վրայ խելագարւածի նման, նա չատ ճնշւած դրութեան մէջ է։ Նա երբեմն խօսակցում է օրիորդի հետ և այդ պատճառով նրան լաւ է ճանաչում. նա պարիզուհի չէ, ինչպէս կրթւած են մեր արւարձանների աղջիկները, այլ դաւառացի է, իր երկրի համոզմունքներով և դաւանութիւնով մեծացած, նա եկեղեցի է գնում։

—Եւ այդ պ. Պաւարին դուր չէ գալիս։

—Նա չըգիտէ ինչպէս բացատրէ նրան, որովհետև նա իր համոզմունքների համաձայն պատկառութիւնն չէ ընդունում...

—Եկեղեցում...

—Ո՛չ միայն եկեղեցում. այլ և դաւառների մօտ։

—Ուրեմն ինչպէս է ուզում նա ամուսնանալ։

—Ապատ դաչինքով։ Ահա ձեզ խնդիր։

—Եւ դուք չունէն տատ այդպիսի յանձնարարութիւն։

—Ես հրաժարւում էի, որքան կարող էի, բայց նա ինձ համոզեց իր խօսքերով։

(Կըշարունակւի)

ՆՐԱ ԱԼԲՈՄՈՒՄ

Ես կոկոն եմ թառամած,
Դու եղեմն ես փափկութեան.
Դի՛ր ինձ կըրծքիդ ամօթխած՝
Այնտեղ ապրեմ յաւիտեան...

Արցունքովդ ջըրի՛ր ինձ,
Ու թո՛ղ բացւեմ քո կըրծքին.
Օ՜, ես այնտեղ՝ էլ ըընաւ
Չեմ թառամի, ի՛մ անգին...

Ա. Գ.

ՀԱՒԱՏԱՐԻՄ ԿԻՆԸ *)

Տ. Շուշանիկն իր աննման գեղեցկութեամբ, իր հմայիչ չարժուածքներով այնքան էր կաչկանդել իմ ուշադրութիւնը, որ ես չատ քիչ կարողացայ զննել մի երիտասարդ ուսանողի, որի հետ պատի ունեցայ այդ երեկոյ ծանօթանալու Յ. Ոսկերչեանի տանը: Նա ալտաքուսաս մեր ուսանող դատակարգի բաւականին բնորոշ տիպերից մէկն էր ներկայացնում: Խիստ մաքուր ու կոկ հագնուած էր նա, ի հարկէ ուսանողական համազգեստը, կարճ մօրուքը խնամքով խուզած և ամենավերջին մօդայի ձևը ուսած: Նա անվերջ չատախօսում էր ամեն տեսակ խնդիրների մասին, առանձնապէս մտերմարար էր վերաբերւում տան տէր Յ. Ոսկերչեանի հետ և չարունակ կատակներ էր անում. իսկ իր *մօտիկ բարեկամուհու*—ս. Շուշանիկի հետ խիստ ծանրաբարոյ ու լուրջ էր: Նա աւելի խոհեմ էր երևում. կանանց հետ անվերջ դատարկաբանութիւններով օր մըթնացնող ուսանողներից չէր. նա աւելի չէր բաց թողնում միչտ կրկնելու, որ իրան հետաքրքրում են միայն իր մասնագիտութիւնը—իրաւաբան էր—և մի քանի հասարակական աչքի ընկնող ծանրակչիռ հարցեր: Մնացած ամեն ինչ և դրանց թւումն էլ կանայք ու սէրը ամենևին չեն հետաքրքրում իրան, դրանց մասին նա մտածելու ժամանակ չունի: Այդպան լուրջ ուսանող ես երբէք չէի տեսել. դա ես մի երևանեան բացառութիւնն էր մեր ներկայ աչլասեռած ուսանողութեան մէջ:

Ռուբէնը,—այդպէս էր ուսանողի անունը, իսկ նրա ազգանունը ես այդ երեկոյ չըկարողացայ լաւ իմանալ, որովհետև նա ինձ հետ ծանօթանալիս, գիտութեամբ թէ անգիտութեամբ, չատ կամաց և այնպէս անորոչ ասաց, որ ես լաւ չլսեցի, իսկ երկրորդ անգամ կրկնել տալ ես անյարմար համարեցի.—ս. Շուշանիկի բարեկամներից էր և միչտ տանեանները այցելում էր նրանց և տրձակուրդի համարեա մեծ մասը նրանց մօտ անցկացնում: Յ. Ոսկերչեանը չատ էր համակրում նրան, որովհետև նա բացի հանճար և հետաքրքիր լինելուց, միևնոյն ժամանակ և նրա կնոջ բարեկամն էր: Հիւրը միչտ աւելի ցանկալի է լինում մի տան մէջ, եթէ այդտեղ նա տանտիկնոջ բարեկամն է: Այդպէս էր և ուսանող Ռուբէնը. ս. Շուշանիկը միչտ հաճութեամբ էր ընդունում իր *աչդ բարեկամին* և Յ. Ոսկերչեանը ես գոհ էր լինում նրա ներկայութիւնից, որովհետև այդ ժամանակ նրա կինն աւելի ուրախ էր լինում, այն ինչ մենակ մնացած ժամանակ նրա վրայ սովորաբար մի ակամայ տխրութիւն էր գալիս իր միայնութեան թէ անզաւակութեան պատճառով, իսկ այդ դրութեամբ նա խիստ մտատանջութիւն էր պատճառում իր մարդուն:

Կողմնակի մարդու վրայ խիստ գեղեցիկ և հաճելի ազատութիւն է թողնում մի ընտանիք, որտեղ տիրում է փոխադարձ սէր, համերաչխութիւն, հաւատարմութիւն: Այդպիսի ընտանիքներ ակում են հետզհետէ աւելի ու աւելի հազւադիւտ դառնալ: Ոսկերչեանների ընտանիքն անչուչտ այդպիսիներից էր:

II

Հետևեալ օրը կիրակի էր: Վ.յ տաւտօտեան ես վերջացրի մի քանի թեթև գործերս Ղ. գիւղացիների հետ, իսկ չարունակել ճանապարհս ես կարող էի միայն երեկոյեան. այդ ժամանակ էր դուրս գնում այդտեղից երկաթուղու գնացքը:

Թէև Ոսկերչեանի տանը ես ամենևին չէի ձանձրանում, սակայն ես ինձ աւելի լաւ զգացողութիւն ստանալու և զարգացումն պատճառելու համար առաջարկեց մի քանի ժամով մի թեթև որսորդութիւն կատարել իրանց ամառանոցի չրջակայքում, որտեղ չատ կային՝ նրա ասելով կաքաւներ, տատրակներ և լորեր:

Այնպիսի ոգևորութեամբ ուսանող Ռուբէնը ձայնակցեց նրան այդ հարցում, որ ես ևս յիչեցի մանկութեանս օրերը և գոհունակութեամբ համաձայնեցի ընկերանալ նրանց, մանաւանդ որ երկար ժամանակ քաղաքի խեղդող մթնոլորտում բաւական ստնչած լինելուց յետոյ, ուզում էի ազատ օդում մի քիչ մաք առնել:

Երբ մենք երեքով կարգին ապատազինուած՝ Յ. Ոսկերչեանն իր և մենք էլ նրա աւելորդ հրացաններով ճանապարհ էինք ընկնում, ս. Շուշանիկն իր սովորական համարձակ ժպտով խնդրեց կէսօրին չուտ վերադառնալ տուն ճաչի:

Տանից արդէն բաւական հեռացել էինք, երբ Ռուբէնը պարտեց իր գրպանները չըդտնելով իր թաչկինակը, ներողութիւն խնդրեց մեզնից ու չտ դարձաւ դէպի տուն թաչկինակը վերցնելու: Մեր հարցին «ապատենք նրան, թէ ոչ», նա պատասխանեց, որ ապատել հարկաւոր չէ և ոչ ինքը չուտով մեզ կըգտնի, ուր էլ լինենք: Նա լաւ ծանօթ էր այդ չրջակայքին և Ոսկերչեանն ապահով էր, որ նա չէր մոլորւիլ և մեզ կըգտնէր մօտակայ անտառում:

Նա գնաց և այլևս չերևաց:

Կէսօրն արդէն մօտեցել էր և մենք բաւական չրջել էինք բլուրների վրայ: Ես չատ քիչ բան էի ապանել, միայն մի քանի հատ փոքրիկ թռչուններ. իսկ Ոսկերչեանն արդէն լցրել էր իր որսորդական պայուսակը: Սկսել էինք վերադառնալ, երբ անակնկալ կերպով մեզ պատահեց կաքաւների մի մեծ երամ: Ոսկերչեանն ինձ չըցոգնեցնելու համար, խնդրեց ինձ կարճ ճանապարհով վերադառնալ տուն, իսկ ինքը գնաց որոնելու կաքաւներին, խոստանալով չուտ գալ:

Մօտենալով գիւղին և հեռուից նչմարելով Ոսկերչեաններին տունը, ես թողեցի առաւօտեան մեր անցած ճանապարհը և մտայ մօտակայ փոքրիկ ծառաստանը, որ տանից հեռու չէր և ուր ես առաւօտեան տեսել էի մի քանի տատրակներ: Ես այնքան քիչ որս էի արել, որ դրանով տուն դառնալ ամաչում էի. ուզում էի գոնէ մի քանի հատ տատրակ ես ապանել:

Ես կամաց, անչչուկ և պատրաստի կուացած քայլում էի խիտ մացառների միջով և չարունակ նայում մօտակայքի բարձր ծառերին, որոնց վրայ ես արդէն նչմարել էի մի քանի հատ այդ թռչուններից:

Երբ բաւական մօտենալով նրանց տեսայ բարձրացնում էի հրացանս կրակելու համար, յանկարծ ինձնից չատ մօտիկ միայն մի քանի քայլ հեռաւորութեան վրայ ականջիս հասան մարդկային կամաց ձայներ: Խակոյն ես սթափեցի և նայեցի դէպի այն կողմը, որտեղից լսւում էր չըշուկը: Ոչինչ չէր երևում: Ես նայեցի խիտ մացառների մէջ և ականջ դրի. նորից կրկնեցին ձայները և այնքան պարզ էին, որ ես հասկացայ, որ խիտ մօտիկից էին գալիս նրանք: Ձուռքով կամաց մի կողմ դարձրի լայնատերև թուփը և տեսայ իմ աւջև մի քայլ հեռաւորութեան վրայ, մի խոտաւէտ փոքրիկ տափարակի վրայ նստած երկու անձնաւորութիւններ: Նրանք երևոները դէպի հակա-

*) Տես, «Ծաղիկ» № 38.

ուակ կողմն էին դարձրել և ես տեսնում էի նրանց մեջքը: Մացառներն ամեն կողմից չդջապատելով նրանց պատըսպարում էին թէ դիտող աչքերից և թէ արևի այրող ճառագայթներից:

Ես ճանաչեցի նրանց. մեկը ուսանող Ռուբէնն էր, իսկ միւսը նրա *բարեկամներին*— ս. Շուշանիկը: Զարմանքըն ու հետաքրքրութիւնը բոլորովին պայարեցին ինձ: Որտե՞ղ պէտք է գտնէր մեզ Ռուբէնը և նա ինքն այժմ որտե՞ղ էր գտնւում... Ինչու՞ են երկու բարեկամները տունը թողած այդ խուլ և կասկածաւոր տեղում սպրդել իրանց զրոյցը: Մի՞թէ... բայց ո՛չ, նրանք մօտիկ բարեկամներ են և նրանց ոչ մի քաշը կասկածի տեղիք տալ չէ կարող: Ես ինձ բաւական անպատասխանելի դրութեան մէջ էի գտնում, լրտեսելով նրանց, որոնք այնպէս բարի և սիրալիր հիւրասիրութիւն էին ցոյց տւել ինձ, ես յանդիմանեցի ինքս ինձ և արդէն պատրաստւում էի նոյնպէս էլ գաղտագողի հեռանալ նրանց մօտից, ինչպէս որ եկել էի, երբ յանկարծ նորից ականջիս հասան նրանց ձայները. խօսում էր Ռուբէնը.

«Հիմա անշուշտ ամուսինդ ու իր հիւրը հեւալով վազում են նապաստակի ետեւից. լա՜ւ բաւականութիւն է, այնպէս չէ՞. Թո՛ղ նրանք իրանց որսըն անեն եւ ապասեն ինձ, իսկ ես իմ որսս արդէն արել եմ: Չի՞ կամենալ այդ ապուշ ծերուկը համեմատել, թէ մեզնից ո՞վ է աւելի լաւ որս արել»:

Տ. Շուշանիկը թեքւած ժպտալով նայում էր նրան իր կլոր սաստկութիւնից այլւող աչքերով: Ռուբէնը ես թեքւեց դէպի նա, ձեռքը նրա վզովը փաթաթեց և նրանք ջերմ սիրաբորբոք կերպով համբուրւեցան:

Միքանի քայլ հեռու նա վայր էր ձգել իր հրացանը, որ այլևս պէտք չէր նրան. նա իր որսը առանց հրացանի էր արել... ինչպէս երևում էր, կատակերգութեան վերջին էին հասել, չուտով վարագոյրն իջնելու էր... Ես թողեցի երկու *բարեկամներին* միմեանց գրկում և անձայն հեռանալով նրանց մօտից, դարձեալ սկսեցի յետ դառնալ այն ճանապարհով, որտեղով եկել էի: Երբ բաւականաչափ հեռացել էի, ես բաց դաշտում աննպատակ պարպեցի հրացանս և մի անգամ է հետ նայեցի ու մացառների չարժումը դիտելով, նկատեցի թէ ինչպէս ս. Շուշանիկը թագնելով դէպի տուն էր չտապում. իսկ Ռուբէնը հրացանը ձեռքին մօտեցաւ ինձ և սկսեց դանդատւել, որ առաւօտից ոտնատակ էր տւել ամբողջ շրջակայքը, բայց ոչ մեզ էր դտել, ոչ էլ որևէ մի որս:

Նա սուտ էր ասում. ամենևին ման չէր եկել, բայց դտել էր մի լաւ որս, և ինչպիսի՜ որս...

Շուտով Յ. Ոսկերչեանն էլ միացաւ մեզ հետ և մենք երեքով միասին տուն վերադարձանք:

Տ. Շուշանիկը ճաշի սեղանն էր պատրաստում. բոլորովին հանդարտ էր նա և անվրդով: Նոյն համեստ ժըպտով նա դիմաւորեց մեզ և նոյն ամօթխածութեամբ էլ ցած էր նայում, երբ մենք խօսում էինք նրա հետ: Այո՛, նոյնն էր նա, ինչ որ երէկ—համեստ, ամօթխած... Ամենափոքրիկ գանգատութիւն անգամ չըկար նրա մէջ. ես էի միայն փոխւել. ես՝ որ երէկ նրան համարում էի մի հրեշտակ, մի դիցուհի, իսկ այսօր մի դև, մի հրէշ. երէկ նա ինձ համար մի անհասկանալի խորհրդաւորութիւն էր, իսկ այժմ ներկայանում էր իմ աչքին իր ամօթալի մերկութեամբ. այդ էր պատճառը, որ երէկ ես նրան անսահման յարգում էի, իսկ այսօր—արհամարհում: Նա այնքան արատաւոր էր և միևնոյն ժամանակ կարողանում էր այնքան վարպետութեամբ ապչեցնել, խաբել իր մարդուն... Կարծես մէկը նորից փոփոխում էր իմ ականջիս.

«Կանայք միշտ եւ ամեն տեղ էլ միեւնոյնն են. նրանց մէջ բացառութիւն չէ կարող լինել»:

Այժմ ս. Շուշանիկն իր բոլոր պեղեցկութեամբ, հրապուրանքներով, ժպիտներով ու պատասխանութիւններով միայն իմ զղւանքս էր չարժում: Օ՜, որքան դարչելի է գեղեցիկ կինը, երբ նա խաբում է, երբ նա կեղծում է. որքան տհպի է նա...

Ռուբէնը ևս իրան խիստ զգոյշ և լուրջ էր պահում. միամիտ ձևանալու մէջ նա չատ վարժ էր երևում: Մի ժամի չափ տևող ճաշի ընթացքում ես չըկարողացայ ամենափոքրիկ նշան անդամ նկատել, որ կասկածելի դարձնէր նրանց յարաբերութիւնները. նրանք չատ լաւ էին ուսումնասիրել իրանց դերերը, խիստ խոյ ամանկ էին...

Ճաշի ամբողջ ժամանակ Յ. Ոսկերչեանը անդադար պատմում էր այդ օրւայ իր կատարած որսորդութեան մասին: Ամենքս էլ գտնում էինք, որ յիրաւի նա լաւ որսորդ էր. իմ անյաջողութիւնը վերագրում էին անվարժութեանս, իսկ Ռուբէնին կատակով չարունակ ծաղրում էին, մանաւանդ տանտիկինը ծիծաղելով «*Տմուտ որսորդ*» էր անւանում նրան: Միայն ես գիտէի, որ այդ խօսքը մասամբ ճիշտ էր ուսանող Ռուբէնի վերաբերմամբ. նա յիրաւի «*Տմուտ որսորդ*» էր, միայն ուրիշի կնոջ սիրտը որսալու կողմից...

Ամենքն էլ խիստ լաւ էին տրամադրւած, միայն ես էի մռայլ ու մտատրոց: Մացառների մէջ պատահած միջնադէպը տանջում էր ինձ և ես նայելով Յ. Ոսկերչեանի անհոգ ուրախութեանը, զարմանում էի թէ որքան խորամանկ կարող է լինել կինը...

Ճաշից յետոյ ես չտապեցի հրաժեշտ տալ և հեռանալ այդ տնից, ուր ամենքն էլ երջանիկ էին և գոհ իրանց վիճակից: Ռուբէնը գտել էր իր իդէալը, ս. Շուշանիկը—իր փափագածը, Յ. Ոսկերչեանը—իր ընտանեկան անդորը վիճակը... Երկու սիրականները—Ռուբէնն ու Շուշանիկը—օրնիբուն իրանց սիրոյ բաժակն էին քամում, իսկ երջանիկ—թէչատ Ոսկերչեանը—իր բազդատութեան վրայ հրճւում: Սակայն ես հաւատում էի, որ Յ. Ոսկերչեանը իրան *երջանիկ* համարելով իր *հաւատարիմ* կնոջ պատճառով, ամենևին չէր կեղծում: Նա այդպէս յիրաւի հաւատացած էր: Քիչ-քիչ ես էլ այնհամոզմանն էի գալիս, որ ամուսինների բազդաւորութիւնը գոյն ւում է՝ եթէ ոչ իրանց կանանց իսկապէս հաւատարմութեան մէջ, այլ այն հաստատ համոզմունքի մէջ, երբ նրանք հաւատացած են լինում, թէ իրանց կանայք հաւատարիմ են:

Լէօնիդ

ԱՆՋԱՒԱԿ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ *)

(Դ-ր. Ա. Մէյէրի)

Կնոջ ամլութիւնը եւ նրա առողջապահութիւնը.

Կանացի ձուն չըջապատող անկուածների աստիճանաբար մեծանալու պատճառով, ձւարանում առաջ է գալիս մօտակայ նեարդերի ծայրերի մշտական գրգիռ. պարբերաբար 4-չաբաթեայ ժամանակամիջոցներում այդ գըրգիռն այն աստիճան աստկանում է, որ նեարդերն ազատուում են նրանից՝ առաջ բերելով արեան նշանաւոր հոսանք դէպի սեռական գործարանները: Անօթներն ուժով լցնելով արիւնով, առաջին—ճնշում են գործ դնում ձւային թաղանթների վրայ, որոնք պրանից պատուում են և միևնոյն ժամանակ ազատում կանացի ձուն, և երկրորդ, որքան որ նրանք հոսում են արգանդի լորձաթաղանթի վրայով, այդ վերջինի մակերևոյթի վրայ առաջ են բերում ազատ արիւնահոսութիւն: Այդպիսով այդ երկու երևոյթները, այսինքն ձւի դուրս գալն իր թաղանթներից և մենստրուացիական արիւնահոսութիւնը, կարելի է համարել հետևանքներ, միևնոյն պատճառի, այսինքն այն ճնշման, որ ածուցած ձւային թաղանթներն անում են մօտակայ նեարդերի ծայրերի վրայ:

Իսկ եթէ ժամանակաւոր կամ կայ մենստրուացիական գործողութեան և ձւի բաժանման գործողութեան մէջ, որն ապացուցւում է և այն հանգամանքով, որ երբ դադարում է ձւի կազմելը, սովորաբար դադարում են և դաշտաններըը, ապա խիստ հասկանալի է, որ այդ ամենը, ինչ որ վատ է ներգործում մենստրուացիական կանոնաւոր ընթացքի վրայ, կարող է նոյնպէս անդրադառնալ ձւի բաժանման գործողութեան վրայ կամ նոյն իսկ, որ աւելի սխրալի է, պէտք է ասելացնել, որ ձւային վանդակը ամամնային թելով կանոնաւորապէս բեղմնաւորելու համար,—քանի որ այդ երկուսի միացումից կարող է սաղմնաւորուել նոր արարած,—պէտք է անպատճառ անցնի նախ ձւանցքի նեղ խողովակի դժւարին ճանապարհով, երբ զանազան տեսակ ցնցումները չատ հեշտութեամբ կարող են չեղել նրան իսկական ճանապարհից: Վերջապէս, մենք դարձնում ենք ընթերցողի ուշադրութիւնն այն բանի վրայ, որ ազամարդի սեռական գեղձերի արտադրութեան սաղմնային թելերը մտնում են կնոջ սեռական դործարանները նրա համար, որ այնտեղ առաջ գայ նրանց միացումը ձւային վանդակների հետ: Մինչև այժմ դեռ մեզ յայտնի չէ, թէ դաշտաններն ինչ ներգործութիւն ունին այդ գործողութեան վրայ, բայց այնուամենայնիւ մի բան անկասկած է, որ նրանք չեն պնդացնում սաղմնային թելերը, քանի որ մեզ յայտնի են բազմաթիւ այդպիսի օրինակներ, երբ բեղմնաւորումը, այսինքն ձւի միացումը սաղմի հետ, կատարւել է հէնց դաշտանների ժամանակ, և միևնոյն ժամանակ չատ մանկաբարձ-բժիշկներ բոլորովին ապացուցել են, որ սաղմնային թելերը երկար չարաթների ընթացքում կարող են կենդանի մնալ կնոջ սեռական գործարանների մէջ:

Դաշտանների ժամանակ կանանց մօտ առաջ է գալիս սեռական գործարանների խիստ գրգիռ, որի ժամանակ նրանք զգայական զւարճութիւնների բաւուն ցանկութիւն են զգում, սակայն խիստ վնասակար է բաւականութիւն տալ այդ ժամանակ այդ հակմանը: Հազւար չէր, որ բիբլիական ժամանակներում հրէանների մօտ կինը, երբ նրա մօտ սկսում էին դաշտանները, համարւում էր անմաքուր և հեռացւում էր սովորական բոլոր զբաղմունքներից, հրէանների այդպիսի վերաբերմունքը դէպի կանայք սրանց մենստրուացիայի չըջանում, անկասկած միմիայն մաքրութեան պահանջից չէր առաջ գալիս: Այժմ էլ Արևելքում չատ տեղերում կայ օրէնք, որն ուղղակի արգելում է այն կանանց, որոնց մօտ սկսած են լինում դաշտանները, ելեւէջ հասարակութեան մէջ, ուր նոյնպէս գանւում են ազամարդիկ: Ֆրանսիական դրականութեան մէջ մենք հեշտութեամբ կարող ենք գտնել չատ օրինակներ, որոնք ցոյց են տալիս այն, որ մենստրուացիայի ժամանակ մերձաւորութիւն ունեցող կանայք հիւանդացել են՝ դրա չնորհիւ, սեռական անդգների ծանր կատարով, որի հետևանքը եղել է ամլութիւնը:

Սակայն, բացի դրանից, դեռ կան և ուրիշ, խիստ չատ պատճառներ, որոնք խանգարում են կնոջը կատարեալ հանգստութեան մէջ անցկացնել այն ժամանակը, երբ սկսում է մենստրուացիան: Սրան վերաբերում են նոյնպէս մօդայի զանազան անհեթեթ պահանջները, որն ամեն մի կին ուչխատում է իսկութեամբ կատարել, քանի որ նրանց կարծիքով, դա լաւ ուղղութեան նշան է: Ամենից առաջ այստեղ պէտք է յիշել այսպէս ասած հարսանիքի ճանապարհորդութիւնների մասին: Նորատի կինը, որի մարդու գնալուց յետոյ առաջին անգամ սկսուել են դաշտանները, ճնշում է խոստովանել այդ բանը իր ամուսնուն և, չուզենալով ոչ մի բանում նրան դիջել, համաձայնում է այսօր այստեղ գնալ, վաղը այնտեղ: Սովորաբար դա կապւած է չատ դժւարութիւնների հետ, որոնք են՝ հիւրանոցների միչտ փոփոխելը, երկաթուղիներով ճանապարհորդելը, իր դլուխեան թոգցնելը բազմաթիւ բարեկամներից ու ծանօթներից, նոյնպէս և հասարաւոր անյարմարութիւնները: Անկասկած, ոչինչ չէ կարելի ունենալ նորատի ամուսինների ճանապարհորդութեան դէմ դէպի որևէ մի առանձնացած տեղ, ուր ջահել զոյգը կարող է իսկապէս հանգիստ անցկացնել իր մեղրամիսը, չըզգալով ոչ մի յուզմունք: Բայց աւելի քան անհոգեմութիւն է տեսնել նորահարսին, որ յոյս է տածում ժամանակով մայր դառնալու, որ նա իսկոյն հարսանիքից յետոյ սկսէ ճանապարհորդութիւն, որ զանազան անյարմարութիւնների ու յուզմունքների պատճառով անպայման պէտք է կորստաբեր ներգործութիւն ունենայ նրա առողջութեան վրայ և վերջիվերջոյ անզաւակ ամուսնութեան պատճառներից մէկը դառնայ: Կը գտնւին մարդիկ, որոնք ինձ կըհակաճառեն, որ ճանապարհորդութեան ժամանակի այդ զըրկանքներն ու անյարմարութիւնները միայն ժամանակաւոր են և այդ պատճառով էլ չեն կարող որևէ ազանձին ներգործութիւն ունենալ կնոջ առողջութեան ընդհանուր դրութեան վրայ, իսկ այդ պատճառով էլ՝ և նրա ամլութեան վրայ: Բայց այդպիսի կարծիքը չէ դիմանում ոչ մի կրիտիկայի, քանի որ, եթէ կինը միանգամ հիւանդացել է գործարանների կատարով, դա խիստ դժւար է ենթարկւում բժշկութեան, իսկ երբեմն էլ համարեա անկարելի է նրան հեռացնել, և եթէ այդպիսի կատարի հետևանքը միչտ էլ ամլութիւն չէ լինում, ապա, յամենայն դէպս, մեծ մասամբ նա կարող է լինել այն պատճառներից մէկը, որոնցից ամուսնութիւնը մնում է անզաւակ: Բեղմնաւորութեան ամբողջ գործողութեան մեխանիզմն այնքան բարդ է, որ բաւական է լինեն կնոջ սեռական գործարանների գործունէութեան մէջ ամենաանչան չեղումներ, որ խանգարի նրա հաւասարակշռութիւնը: Սաղմային թելերի կենսունակութիւնը կարող է հեշտութեամբ խանգարել այն լորձանիւթերի անբնական արտադրութեան փոփոխած քիմիական յատկութեան ու քանակութեան չնորհիւ, որ իսկապէս կազմում է կատարքի էութիւնը:

(Պըշարունակի)

*) Տես «Տարազ» № 38.

Այլ եւ այլ

Զանազան մարդկային ցեղերի վարակումն.—Ամեն տեղ, ուր մարդկային զանազան ցեղեր առաջին անգամ յարաբերութեան մէջ են մտնում, նկատելի է լինում մի հետաքրքիր երեոյթ, որի էութիւնը մինչև այժմս չէ պարզուած։ Այդ այն երեոյթն է, որ մի ցեղ վարակում է միւսին տարափոխիկ ցաւերով և ամենածանր ձեով։ Ամենից լաւ ապացուցանում են այդ փաստը Խաղաղ ովկիանոսի կղզինները, ուր, մինչև եւրոպացիների երեալը, ընդհանրապէս յայտնի չէին հիւանդութիւնները։ Բժշկապետ Տուրնէրը, որին լաւ ծանօթ են Պոլինեզեան կղզինները, հաւատացնում է, թէ Նոր-Զիլանդեան ազգաբնակութիւնը այնպիսի հիւանդութիւնները, ինչպէս՝ հազ, ինֆլուէնցա, կաշւի ցաւեր և այլն, վերագրում են սպիտակամորթների հետ յարաբերութիւն ունեցողներին և այդ հիւանդութիւնները անուանում են «օտարերկրային», և բնիկները իրաւունք ունին, որովհետև նրանք մեռնում էին առաջ միայն զառամութիւնից։ Միևնոյն երեոյթը նկատել են վայրենիները կանադական խումբ կղզինների բնակիչների մէջ իրար հետ հաղորդակցութիւն ունենալիս։ Նրանք էլ վարակում են իրար նոր ցաւերով։ Ահա թէ ինչու բնիկները օտար երկրացիներին, եթէ չեն կարող արտաքսել, սպանում են։

Անցեալում Անգլիայի ագենտ Տօնգի կղզինների վրայ յայտնում է, որ այդ կղզինների բնակիչների մէջ ամեն անգամ, երբ այցելում են եւրոպական նաւեր, տարածւում է ինֆլուէնցայի նման հիւանդութիւն։

Պոնրիկ կղզինների վրայ եւրոպացիները դուրս եկան առաջին անգամ 1853 թ. երբ ամիս չեռոյ բնիկների մէջ տարածւեց մի հիւանդութիւն, որի նշաններն էին դողէրոցք և աստիճ գլխացաւ, որ համարեա միշտ մահուան ելք է ունենում։ Բնութիւն ատող բնիկները սպաչում էին եւրոպացիներին հեռանալ իրանց կղզիներից։

Ամենաանբացատրելին և հետաքրքրականը ամենատարակուսելին այդ հիւանդութիւններից այն էր, որ բռնկւեց 100 տարի առաջ Ֆիջիի կղզինների վրայ։ 1803 թ. նրանց ժայռերի մէջ կործանւել էր մի անյայտ նաւ։ Դրանից մի քիչ յետոյ սկսեց բնիկների մէջ տարածւել մի հիւանդութիւն, որ խօլերի էր նման։ Հիւանդութիւնը արագ տարածւեց կղզիների վրայ և այնքան սաստկացաւ, որ շատ տեղ բնակիչները խսպառ բնաջինջ եղան։

Այդ հիւանդութիւնը, երևի, ոչ պակաս տռնկալի էր, քան թէ 1876 թ. կարմրուկը, որին զոհ եղան 40,000 մարդ, այդ կղզինների ազգաբնակութեան համարեա մի երրորդ մասը։

Սոխր Հանդակ

Թագու. հ. ս. Ն. Ք. Տ.-Կ. Մտացանք և հոկտ. 12-ից ձեր նամակը։ Ցաւում ենք մեր կասկածների հարցը չէ։ Եթէ անպայման համոզուած իսկ լինենք, որ գրպարտել են ձեզ, այնուամենայնիւ հերքել մենք չենք կարող և նոյնիսկ իրաւունք էլ չունենք, քանի որ յօդուածագիրը մինչև օրս էլ պնդում է իր ասածները և խոստանում թէ միջնորդ և թէ մարմաւոր դատարանի առաջ հաստատել իր գրածները։ Մնում է երկու ճանապարհ՝ կամ դուք հերքէք հրապարակով նրա գրածները, և կամ թէ դիմէք միջնորդ կամ մարմնաւոր դատաստանի։ Մենք անկեղծ ուրախ կը լինենք, որ հաստատւի ձեր անմեղութիւնը և գրպարտիչը կրէ իր արժանի պատիժը։ Աշխարհի երեսին ոչ մի տեղ չը կայ, բացի վայրենիների և բարբարոսների աշխարհից, ուր վճիռ կայացնեն առանց երկու կողմին անաչառօրէն լսելուց և քննելուց յետոյ։ Ահա հէնց այն մարդկի, որոնց մօտ խղճմտութիւնը խոստովանել է, որ իր գրածները զրպարտութիւն է, թէև նրբանք, իրանց ստորագրութեամբ և հաստչեով (որ խնդրում ենք դուք էլ վաւերացնէք, որ յիրաւի այդ իրանց՝ վկաների ստորագրութիւնն է) գրեն մեզ իրանց լսածը։ Մի խօսքով ամենաընդարձակ միջոց և հնարաւորութիւն մեր կողմից միշտ ունիք, միայն անարդար քայլ, ներեցէք, Տէր-Հայր, մենք չենք կարող անել։ Իւրաքանչիւր անհատի իրաւունքները մենք առնել ոչ կարող ենք և ոչ էլ կը կամենանք։

Թիֆլիս. Ս.. Ա. Ի՞նչպէս չէ, ասելիք ունինք և շատ ընդարձակ։ Իսուր են դատապարտում Չիրվանզադէին. նա ինչով է մեղաւոր, երբ այն կեանքը, որից վերցրել է նա իր նեգատիւները, անբարոյական է, տգեղ և անհամակրելի։ Չիրվանզադէն իրական գաղշելի կեանքը ոչ գարդարել է բարի ռեինգինցիայով և ոչ իր գրւածքի նիւթը կեանքից տղաւորել։ Մեզ համար հասկրելի չեն Իուդէնը և իր քոյր Աննան։ Հերսելեան թէև գարգացած, բայց դեռ իսկական կեանքը չը ճանաչած մի անձնաւորութիւն է։ Մի սխալ, որ արել է Չիրվանզադէն, այդ Իուդէնի տիպը և նրա կատարած դերն է։ Մանրամասն կը յայտնենք մեր կարծիքը։ Բայց պատասխանել, թէ Իրաւունք ո՞ւնէր Հերսելեան, թէ ոչ, այդ անկարելի է, որովհետև դեռ բաւականաչափ ընդգծած չէ Հերսելեայի տիպը։

Խմբագիր-հրատարակիչ՝
Տիգրան Նազարևան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ

ԴՕԿՏՕՐ Վ. ԱՐԹՐՈՒՆՈՒ

Նորագոյն ապարատներով և ելէկտրական մեքենաներով. մասնաւորապէս բզի, բերի, ականջի եւ կրծքի հիւանդութիւնների համար։
Сергіевская ул; № 12.

Տարազի այն №-ի հետ էլ ուղարկում ենք մեր բոլոր բաժանորդներին ռուս-ֆրանս. «Проводникъ» ընկերութեան յայտարարութիւնը։

ԾԵՐԵՆՑ

ԵՐԿՈՒՀԱՐԻՒ IX-ՐԴ ԴԱՐՈՒՀԻ

ՎԷՊ ՍԱՍՈՒՆԻ ԿԵԱՆՔԻՑ

Հեղակի պատկերով, կենսագրութիւն

Գինը 2 րուբ.։

Շեթել, մահուր, չափաւոր գներով
ճիւրանոց Բերլինում

Hotel New-Iork

(Frieder. Wilh. Schulze)

Friedrich-Str. 136, *հազիւ 2 րոպէ* Bahnhof. Friedr. Str. **Կենտրոնական կայարանից,** *կամուրջի վրայ:*

Ունի քան 60 **սենեակ** *80 մահճակալով ընտանիքների համար: Առանձին* **սալօններ, սեղանատներ:** *Մի մարկով* **ԱՄՈՒՍՆԱՄԱՏ.** (**սաւոն, օծկոպ, թէյ, կարագ, մեղր, պանիր, մսեղաբաներ եւ զանազան թխուածք**)։ *Սենեակները* 2—15 *մարկ օրը, շաբթով զիջումն:* 0—4

ՊԱՐՈՅՐ ՀԱՅԿԱԶՆ

Ե Ւ

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Նկար Գ. Բաշինջաղեանի։

Գինը 50 կոպ.

Պիտի Աղբիւրի խմբագրութեան։

ԱՂՋԱՏԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՀԱՊԱՐԴԵԱՆԻ

(Պուկիա, Վօլօնցովի տրձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից,

առաւօտեան՝

Ռ. Ա.. Նաւասարդեան—11—12 *ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.*

Ն. Մ. Զիկովացի—9—10 *ժ. աչքի, ներքին և նեարդային*

Է. Ի. Գզելիեւ—12—1 *ժ. ականջի, քթի և կոկորդի հ.*

Զ. Ի. Ռաբաճեանեան—11—12 *ժ. կանանց և երեխայոց հիւանդ.*

Ա.. Պ. Կաւարպետեանց—1—1½ *ժ. ներքին և երեխայոց հ.*

երեկոները՝

Ն. Ն. Թոստոմբէկով—5—6 *ժ. վիրաբուժութեան և մոլթու հ.*

Ա.. Ն. Շպակովսկի—6—7 *ժ. նեարդային (ելեկտրաթոյժ), վեներ. և մոլթու հ..*

Պ. Ա.. Թարխանեանց—7—7½ *ժ. ներքին և երեխայոց հ.*

Ռ. Ա.. Նաւասարդեան—7½—8 *ժ.*

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համաձորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Աւետիսեանի—*տանը. ծաղկահատ և բժշկական մասմնամարզ. դիմել 11—1 ժ.*

Տնտեսական վերատեսուչ՝

Բժշկապետ ՆՈՒՄՍԱՐԴԵԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 18-го октября 1902 г. Типографія Т-ва „Веричевъ и Каменмахеръ“, Тифлисъ, Михайловск. пр., № 81. Телеф. № 852.
Տպարան ընկ. «Վէրէիչև և Կամենմախեր», Թիֆլիզ, անկիւն Միխայէլեան պր., 81. Տելեֆոն № 852.